

առ վէզիրն տալով զթուղթն . եւ ունի պատրաստեալ մատուցանել զթուղթն առ թագաւորն ի մտանելն ի քաղաքս եւ ի ցրուելն յաւուր ուլուֆէին ի տիվանի հումայունն , բերելով եւ սնճապս եւ կեօճէնս եւ սանսարս եւ զէրտէվայս եւ սամուրս կենդանիս յամենից ազգաց չորս չորս , եւ երկոտասան հաւս , որսորդս եւրէոց , նապաստակաց եւ գայլոց՝ մեծամեծ քան զբաղս¹⁾) եւ փոքր քան զսագս ի գոյն սնճապի ուարօ զանուն կոչեցեալ , բարձեալ ընդ ձեռս որպէս զբազէս , որ եւ ի Մարտի եօթն եղեւ այնպէս : Եւ խնդրեաց յարքայէ զմին եկեղեցի շինել ի Ղուամղափին կոչեցեալ Սուրբ Աստուածածին . եւ շատ ջանացին գործակալք վասն խափանման : Այլ արքայն իբրեւ ետ հրաման զոր շինեցին . եւ գարձաւ դեսպանն ի Մօսկով : Եւ վէզիրն պատճառեաց զփէնչէրէսն եւ առաքեաց քէշֆի եւ փակեաց , եւ դարձեալ քէշֆի առաքեաց եւ գտաւ ամենայն չափք լայնութեան եւ երկայնութեան եւ բարձրութեան ըստ առաջնումն քէշֆին : Ոչ զիջեալ ի գոռողութենէ ագահութեան՝ չթողոյր բանալ , եւ Յոյնք իմացեալ զխորամանկութիւն նորա որ վասն կաշառոց ընդդիմանայր՝ ծածկապէս ետուն դրամ որքան եւ նա պահանջեաց , եւ ապա բանալ ետ զեկեղեցին :

Ի . — Եւ ի հանդիպիլն իմ ընդ պատրիարքն Երուսաղէմի՝ միշտ հարցանէ ի բարիս զբարեկենդանութիւն վեհիս մերոյ ողջունիւ եւ նոյն սիրով կայ որպէս ի բնուստ , եւ հոգայ եւս առաւել վասն տանն սրբոյ , նոյնպէս եւ դասատունն փիլիսոփայից յիշատակին սոյն ոճով ի գովութիւն նմա : Եւ ետ գրել Զէմէրեէ Զէլէպին զիր ողջունի առ վեհդ մեր եւ սուրբ . ասաց՝ Առաքեմ ընդ սմա եւ զեկեալ զիրան յԵրուսաղէմէ . եւ ամենեքեան հարցաքննեն վասն գալլս-

1) բաթս .